ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԱԳՆ ՊԱԾ-ԲԱԾՁԲ-23/06

ք. Երևան

«23» հունիս 2022 թ.

ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայությունը, ի դեմս ծառայության պետ Լ. Մինասյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բլիզարդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 4378800 (չորս միլիոն երեք հարյուր յոթանասունութ հազար ութ հարյուր) ՀՀ դրամ, :

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **10** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի դրույթները տարածվում են կողմերի միջև 2022 թ. մայիսի 9-ից ծագած հարաբերությունների վրա:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայություն Ք. Երևան, Վ.Սարգսյան 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024941 ՀՎՀՀ 02545976 Պետ՝ Լ. Մինասյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.	**Կատարող** «Բլիզարդ» ՍՊԸ ք. Երևան, Այգեստան 2-րդ փող. տուն 27 «Ամերիաբանկ»ՓԲԸ Հ/Հ 1570022641230100 ՀՎՀՀ 02577644 Տնօրեն Ա. Խաչատրյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«23» հունիս 2022 թ. կնքված
ԱԳՆ ՊԱԾ-ԲԱԾՁԲ-23/06 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	98391160/1	**ՀԱՊԿ նախարարների խորհրդի նիստի շրջանակներում Ֆուրշետ 15 անձի համար Վ. Սարգսյան 3-ում 09.06.2022թ.** **Խորտիկներ** 1. Մակարոններ - 60 հատ 2. Չրի տեսականի - 1 բաժին 3. Ընկուզեղեն - 1 բաժին 4. Սեզոնային մրգի տեսականի – 1 տեղ 5. Աղբյուրի ջուր 0.33լ. - 15 հատ 6. Աղբյուրի ջուր 0.5լ. - 18 հատ 7. Սուրճ, Թեյ – 20 բաժակ 8. Բնական հյութ Ցան 1.լ. – 4 հատ 9. Կոլա, Ֆանտա, Սպրայտ 0.25լ. – 18 հատ 10. Հանքայի ջուր 0.5լ. – 18 հատ **09.06.2022թ. Բաղրամյան 26 60 անձի համար** **Ձկան տեսականի** 1. Կարմիր ձկով – 60 բաժին 2. Կարմիր խավիարով – 60 բաժին 3. Ծովախեցգետին ֆիլո խմորով – 60 բաժին 4. Ցուղաձուկ – 60 բաժին **Մսային կանապեներ** 1. Մսի տեսականի – 40 բաժին 2. Պոռոշուտոյով և չերի լոլիկով- 30 հատ 3. Հավի ռոլ բանջարեղենով- 30 հատ 4. Բեկոնը կամամբերով – 30 հատ **Պանրի տեսականի** 1. Պանրի տեսականի 40 բաժին 2. Ֆետա պանիր մածուկով և չորացրած լոլիկով - 30 հատ 3. Խուրմա ֆետա պանրով և ընկույզով - 30 հատ 4. Դդմիկով և գրիլ արված պղպղոով – 30 բաժին **Բուսական տեսականի** 1. Սմբուկով լոլիկով ֆետա պանրով – 30 հատ 2. Սփրինգ ռոլլ բանջարեղենով և տերիյակի սոուսով – 30 հատ **Աղանդեր** 1. Թխվածքի տեսականի – 40հատ 2. Թխվածքաբլիթներ – 40 հատ 3. Մակարոն – 40 հատ 4. Չրի տեսականի – 3 բաժին 5. Ընկուզեղեն – 3 բաժին 6. Սեզոնային մրգի տեսականի – 3 տեղ **Ըմպելիք** 1. Աղբյուրի ջուր 0.5լ. - 30 հատ 2. Սուրճ, Թեյ – 50 բաժակ 3. Բնական հյութ Ցան 1.լ. – 16 հատ 4. Կոլա, Ֆանտա, Սպրայտ 0.25լ. – 20 հատ 5. Հանքայի ջուր 0.5լ. – 8 հատ	դրամ	4378800	1	ք. Երևան, Վ. Սարգսյան 3, Բաղրամյան 26	09-10.06. 2022թ

		Ֆուրշետ 20 անձի համար Բաղրամյան 26-ում 10.06.2022թ. **Ձկան տեսականի** 1. Կարմիր ձկով – 20 բաժին 2. Կարմիր խավիարով – 20 բաժին 3. Յուղաձուկ – 20 բաժին **Մսային կանապեներ** 1. Պոռշուտոյով և չերի լոլիկով- 20 հատ 2. Հավի ռոլ բանջարեղենով- 20 հատ 3. Բեկոնը կամամբերով – 20 հատ **Պանրի տեսականի** 1. Ֆետա պանիր մածուկով և չորացրած լոլիկով - 20 հատ 2. Խուրմա ֆետա պանրով և ընկույզով - 20 հատ 3. Դդմիկով և գրիլ արված պղպոռով – 20 բաժին **Բուսական տեսականի** 1. Սմբուկով լոլիկով ֆետա պանրով – 20 հատ 2. Սփրինգ ռոլլ բանջարեղենով և տերիյակի սոուսով – 20 հատ **Աղանդեր** 1. Թխվածքի տեսականի – 20հատ 2. Թխվածքաբլիթներ – 20 հատ 3. Մակարոն – 20 հատ 4. Չրի տեսականի – 1 բաժին 5. Ընկուզեղեն – 1 բաժին 6. Սեզոնային մրգի տեսականի – 1 տեղ **Ըմպելիք** 1. Աղբյուրի ջուր 0.5լ. - 30 հատ 2. Սուրճ, Թեյ – 50 բաժակ 3. Բնական հյութ Ցան 1.լ. – 16 հատ 4. Կոլա, Ֆանտա, Սպրայտ 0.25լ. – 20 հատ 5. Հանքայի ջուր 0.5լ. – 8 հատ **Ֆուրշետ 90 անձի համար Բաղրամյան 26-ում 10.06.2022թ.** **Ձկան տեսականի** 1. Կարմիր ձկով – 90 բաժին 2. Կարմիր խավիարով – 90 բաժին 3. Յուղաձուկ – 90 բաժին **Մսային կանապեներ** 1. Էրեբունի ֆիլե - 70 հատ 2. Հավի ռոլ բանջարեղենով- 70 հատ 3. Քյուֆթայուվ և թարխունով կանապե – 70 հատ 4.Մսի տեսականի – 70 բաժին **Պանրի տեսականի** 1. Ֆետա պանիր մածուկով և չորացրած լոլիկով - 70 հատ 2. Կանապե կապրեզե - 70 հատ 3. Պանրի տեսականի – 70 բաժին 4. Պանրային տրյուֆել համամունքով – 70 բաժին **Բուսական տեսականի** 1. Սմբուկով ռոլլ ընկույզով – 70 հատ 2. Բրուսկետա սնկով և պարմեզանով – 70 հատ 3. Սփրինգ ռոլլ բանջարեղենով – 70 հատ 4. հաց, լավաշ **Աղանդեր** 1. Թխվածքի տեսականի – 100հատ 2. Թխվածքաբլիթներ – 20 հատ 3. Մակարոններ – 80 հատ 4. Չրի տեսականի – 4 բաժին 5. Ընկուզեղեն – 4 բաժին 6. Սեզոնային մրգի տեսականի – 100 հատ **Ըմպելիք** 1. Աղբյուրի ջուր 0.5լ. - 70 հատ 2. Սուրճ, Թեյ – 120 բաժակ 3. Բնական հյութ 1.լ. – 32 հատ 4. Կոլա, Ֆանտա, Սպրայտ 1լ. – 20 հատ 5. Հանքայի ջուր 0.5լ. – 15 հատ 6. Կարմիր գինի Կարաս 0.7լ - 21 հատ 7. Սպիտակ գինի Կարաս 0.7լ - 8 հատ					

		Ֆուրշետ 20 անձի համար Բաղրամյան 26-ում 10.06.2022թ. **Մսային կանապեներ** 1. Քլաբ սենդվիչ - 100 հատ 2. Հավի ռոլ բանջարեղենով- 100 հատ 3. Քյուֆթայով և թարխունով կանապե – 100 հատ **Պանրի տեսականի** 1. Ֆետա պանիր մածուկով և չորացրած լոլիկով - 70 հատ 2. Կանապե կապրեզե - 80 հատ 3. Կանապե կապրեզե – 80 բաժին 4. Պանրային տրյուֆել համամունքով – 80 բաժին **Բուսական տեսականի** 1. Սմբուկով ռոլլ ընկույզով – 80 հատ 2. Բրուսկետա սնկով և պարմեզանով – 80 հատ 3. Սփրինգ ռոլլ բանջարեղենով – 80 հատ 4. Սպանակոպիտա – 100 հատ **Տաք կերակրատեսակ** 1. Հավի խորոված – 80 հատ 2. Իշլի քյուֆթա – 80 հատ 3 Հաց, լավաշ **Աղանդեր** 1. Թխվածքի տեսականի – 130հատ 2. Թխվածքաբլիթներ – 100 հատ 3. Սեզոնային մրգի տեսականի – 4 տեղ **Ըմպելիք** 1. Աղբյուրի ջուր 0.5լ. - 120 հատ 2. Սուրճ, Թեյ – 180 բաժակ 3. Բնական հյութ 1.լ. – 24 հատ 4. Կոլա, Ֆանտա, Սպրայտ 1լ. – 25 հատ 5. Հանքայի ջուր 0.5լ. – 15 հատ **Այլ** 1. Ծաղկային ձևավորում 2. Սպասարկում/սպասքի տրամադրում/ տեղափոխում					

Պատվիրատու	Կատարող
ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայություն Քաղ. Երևան, Վ.Սարգսյան 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024941 ՀՎՀՀ 02545976 Պետ՝ Լ. Մինասյան _____ (ստորագրություն) Կ.Տ.	«Բլիզարդ» ՍՊԸ ք. Երևան, Այգեստան 2-րդ փող. տուն 27 «Ամերիաբանկ»ՓԲԸ Հ/Հ 1570022641230100 ՀՎՀՀ 02577644 Տնօրեն Ա. Խաչատրյան _____ (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«23» հունիս 2022 թ. կնքված
ԱԳՆ ՊԱԾ-ԲԱԾՁԲ-23/06 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գումարը ներկայացված է աճողական կարգով ՀՀ դրամ

Ապրանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98391160/1	ՀԱՊԿ նախարարների խորհրդի նիստի շրջանակներում Ֆուրշետ 09-10.06.2022թ.	-	-	-	-	-	4378800	4378800	4378800	4378800	4378800	4378800	4378800	4378800

Պատվիրատու	Կատարող
ՀՀ ԱԳՆ Պետական արարողակարգի ծառայություն Ք. Երևան, Վ.Սարգսյան 3 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011024941 ՀՎՀՀ 02545976 Պետ Է. Մինասյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.	«Բլիզարդ» ՍՊԸ ք. Երևան, Այգեստան 2-րդ փող. տուն 27 «Ամերիաբանկ»ՓԲԸ Հ/Հ 1570022641230100 ՀՎՀՀ 02577644 Տնօրեն Ա. Խաչատրյան ---------- (ստորագրություն) Կ.Տ.